ԱՂՈԹՔ ԱՌ ՀԱՅՐ

Հովհաննես առաքյալի արձանագրած այս աղոթքը թույլ է տալիս հայացք նետել Հիսուսի սրտին: Նա Իր երկրային առաքելության մանդատը փոխանցեց Իր աշակերտներին: Նա աղոթեց նրանց համար՝ իմանալով, որ հակառակությունը դժվար է լինելու. նրանք դրսից հալածանք կզգան, իսկ ներսից՝ գայթակղություն և կասկած: Հիսուսը նաև աղոթեց բոլոր հավատացյալների համար՝, որ «առաքյալների խոսքի միջոցով կհավատան» (17.20): Դարերի ընթացքում հավատացյալները լսել են Հիսուսի մասին այս առաջին առաքյալների հավատարմության շնորհիվ: Մենք կարող ենք մխիթարվել՝ իմանալով, որ Հիսուսն աղոթեց մեզ համար այդ գիշեր, և որ Նա դեռ բարեխոսում է մեզ համար (Եբր. 7.25):

I. **ԱՂՈԹՔ ԻՐ ՀԱՄԱՐ (1-5)**

II. **ԱՂՈԹՔ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ (6-19)**

III. **ԱՂՈԹՔ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՄԱՐ (20-26)**

ՍՈՒՐԲԳՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ. ՀՈՎՀԱՆՆԵՍ 17.1-26

1 Հիսուսն այս բաներն ասելուց հետո աչքերը դեպի երկինք բարձրացրեց ու ասաց. Հայր, ժամը հասել է. փառավորի՛ քո Որդուն, որպեսզի քո Որդին էլ քեզ փառավորի:

- ***Սա մի խորը և իմաստալից աղոթք է, որը պատկերում է ՀՈՐ հետ հաստատուն փոխհարաբերությունը:***

2 Ինչպես դու նրան իշխանություն տվեցիր բոլոր մարդկանց վրա, այնպես էլ նա հավիտենական կյանք կտա բոլոր նրանց, ովքեր նրան հավատացին: 3 Այս է հավիտենական կյանքը, որ ճանաչեն քեզ իբրև միակ ճշմարիտ Աստծու և նրան, որին ուղարկել ես՝ Հիսուս Քրիստոսին: 4 Ես քեզ երկրի վրա փառավորեցի. կատարեցի այն գործը, որն ինձ տվեցիր, որ անեմ: 5 Իսկ հիմա, Հայր, դո՛ւ ինձ փառավորիր քո ունեցած այն փառքով, որ ունեի քեզ մոտ նախքան աշխարհի ստեղծումը:

I. ԱՂՈԹՔ ԻՐ ՀԱՄԱՐ (1-5)

- ***Նախ՝ Հիսուսն աղոթում է Իր համար, որ փառավորվի:***
  - *Փառավորի՛ Որդուն, որովհետև ժամը հասել է:*
  - *Փառավորի՛ր Որդուն, որովհետև Որդուն տրվել է իշխանություն՝ հավիտենական կյանք տալու համար:*
  - *Փառավորի՛ր Որդուն, որովհետև Հիսուսը հավիտենական կյանքի միակ ճանապարհն է:*
  - *Փառավորի՛ր Որդուն, որովհետև Նա կատարեց այն գործը երկրի վրա, որը Հայրը տվեց Նրան անելու:*

- ***Այժմ, երբ Հիսուսն ասաց՝ փառավորիր քո Որդուն, արդյոք գիտե՞ք, թե Նա իրականում ինչ էր խնդրում:***

> ***“Մարդկանց համար խաչը կարծես ամոթի գործիք լիներ: Քրիստոսի համար դա էր ճշմարիտ փառքի միջոցը”: (Մորիս)***

1 Կոր. 1.18 - 18 Որովհետեւ խաչի խօսքը կորածների համար յիմարութիւն է, բայց մեզ փրկուածներիս համար Աստուծոյ զօրութիւն է:

Հայտնություն 5.9-13 – 9Եվ նոր երգ էին երգում ու ասում. Արժանի ես այդ գիրքը վերցնելու և դրա կնիքները բացելու, որովհետև մորթվեցիր ու քո արյունով մեզ գնեցիր Աստծու համար բոլոր ցեղերից ու լեզուներից, ժողովուրդներից ու ազգերից: 10 Եվ նրանց մեր Աստծու համար թագավորներ ու քահանաներ դարձրիր, և կթագավորեն երկրի վրա:

11 Տեսա ու նաև լսեցի բազում հրեշտակների ձայնը գահի, չորս կենդանիների և երեցների շուրջը. նրանց թիվը բյուր-բյուրավոր և հազար-հազարավոր էր: 12 Նրանք բարձրաձայն ասում էին. Մորթված Գառն արժանի է ընդունելու զորություն, հարստություն, իմաստություն, ուժ, պատիվ, փառք և օրհնություն: 13 Լսեցի նաև, որ երկնքում, երկրի վրա, երկրի տակ և ծովում եղած բոլոր արարածները, դրանց մեջ եղած ամեն բան ասում էին. Գահի վրա նստողին ու Գառանը լինի օրհնություն, փառք ու իշխանություն հավիտյանս հավիտենից:

II. ԱՂՈԹՔ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ (6-19)

1. Հիսուսի առաջին խնդրանքն աշակերտների համար. Հայր, պահիր նրանց:

աշխարհի մեջ են... աշխարհից չեն... աշխարհից վերցնես...

*11 Ես այլևս աշխարհի մեջ չեմ, իսկ նրանք այս **աշխարհի մեջ են**. և ես քեզ մոտ եմ գալիս: Սո՛ւրբ Հայր, պահի՛ր նրանց քո անունով, որ ինձ տվեցիր, որպեսզի **միավորված լինեն**, ինչպես որ մենք ենք **միավորված**:*

*12 Երբ ես աշխարհում նրանց հետ էի, ես նրանց պահում էի քո անունով, որն ինձ տվեցիր: Ես պահեցի, ու նրանցից ոչ մեկը չկորավ, բացի կորստյան որդուց, որպեսզի իրականանար գրվածը: 13 Բայց հիմա ես քեզ մոտ եմ գալիս և այս բաներն ասում եմ, ինչքան ժամանակ որ **աշխարհում եմ**, որպեսզի **իմ ուրախությունն** իրենց մեջ ամենայն կատարելությամբ ունենան: 14 Ես քո խոսքը նրանց տվեցի, սակայն աշխարհը նրանց ատեց, որովհետև նրանք այս **աշխարհից չեն**, ինչպես որ ես այս աշխարհից չեմ:*

*15 Ես չեմ խնդրում, որ նրանց **աշխարհից վերցնես**, այլ որ նրանց պահես չարից: 16 Նրանք այս աշխարհից չեն, ինչպես որ ես այս աշխարհից չեմ:*

“

Հոբը, Մովսեսը, Եղիան և Հովնանը աղոթեցին, որ աշխարհից վերցվեն, բայց Աստված չպատասխանեց: Նա նաև ցանկանում է, որ մենք մնանք աշխարհում և ավարտենք այն գործը, որը Նա տվել է մեզ:

Բ Թես. 3.3 – Բայց Տերը հավատարիմ է. նա ձեզ կհաստատի և կպահի չարից:

Դուք Աստծուց եք, որդյակնե՛ր, ու հաղթեցիք նրանց, որովհետև ավելի մեծ է նա, որ ձեր մեջ է, քան թե նա, որ աշխարհի մեջ է: ...որովհետեւ ամեն ինչ որ աշխարհքում է՝ մարմնի ցանկութիւնը, աչքերի ցանկութիւնը եւ այս կեանքի ամբարտաւանութիւնը, Հօրիցը չէ, այլ աշխարհքից է (Ա Հով. 4.4, 1 Հով. 2.16):

2. ***Հիսուսի երկրորդ խնդրանքը աշակերտների համար. Հայր, սրբացրու՛ նրանց: Ինչպե՞ս են մարդիկ սրբագործվում կամ սրբացվում:***

17 Սրբացրո՛ւ նրանց քո ճշմարտությամբ. քո խոսքը ճշմարտություն է:

Ա Պետրոս 1.22 – Մաքրելով ձեր հոգիները ճշմարտությանը հնազանդությամբ՝...

*18 Ինչպես դու ինձ աշխարհ **ուղարկեցիր** (Latin missio), այնպես էլ ես նրանց աշխարհ ուղարկեցի: 19 Եվ ես ինձ նրանց համար եմ սրբացնում, որպեսզի նրանք էլ սրբացվեն ճշմարտությամբ:*

2 Կոր. 5.21 - Որովհետեւ Աստուած նորան, որ մեղք չգիտէր, մեզ համար մեղք արաւ. որ մենք Աստուծոյ արդարութիւնը լինենք նորանում:

III. ԱՂՈԹՔ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՄԱՐ (20-26)

20 Բայց միայն նրանց համար չեմ խնդրում, այլ նաև նրանց, ովքեր նրանց խոսքի միջոցով կհավատան ինձ,

- ***Խնդրանքը, որ Հիսուսն աղոթեց մեզ համար.***

*21 որպեսզի **բոլորը մեկ լինեն**, ինչպես դու, Հայր, իմ մեջ, և ես՝ քո մեջ. որպեսզի նրանք էլ մեր մեջ լինեն, որպեսզի աշխարհը հավատա, որ դո՛ւ ինձ ուղարկեցիր:*

- ***Մեզ պետք է զերծ մնալ բաժանումից. Պահիր նրանց, որպեսզի նրանք լինեն մեկ:***

Սաղմոս 133.1-3 – Ինչքա՜ն բարի և ինչքա՜ն ցանկալի է, որ եղբայրները բնակվում են միասին, իրար հետ: Այն ազնիվ յուղի պես է, որ գլխի վրայից թափվում է մորուքի վրա, այսինքն՝ Ահարոնի մորուքի վրա, և իջնում է մինչև նրա հանդերձանքների ծայրը: Հերմոնի շաղի պես է, որ ցած է իջնում Սիոնի սարերի վրա, որովհետև Տերն այնտեղ պատրաստեց օրհնություն և կյանք՝ մինչև հավիտյան:

*22 Եվ այն **փառքը**, որ ինձ տվեցիր, ես **նրանց տվեցի**, որպեսզի **մեկ լինեն**, ինչպես **մենք ենք մեկ**:*

- ***Ինչ է սա նշանակում? Ինչպե՞ս է սա համապատասխանում Եսայիա 42.8-ին, որտեղ ասվում է. «Ես Իմ փառքը ուրիշին չեմ տա»:***

*23 Ես՝ նրանց մեջ, և դու՝ իմ մեջ, որպեսզի կատարյալ լինեն **միության մեջ**, որպեսզի աշխարհն իմանա, որ դո՛ւ ինձ ուղարկեցիր ու նրանց սիրեցիր այնպես, ինչպես ինձ սիրեցիր: 24 Հայր, ում ինձ տվեցիր, ուզում եմ, որ ինձ հետ լինեն, որտեղ ես եմ, որպեսզի իմ փառքը տեսնեն. այն փառքը, որ ինձ տվեցիր. որովհետև ինձ սիրեցիր նախքան աշխարհը ստեղծելը:*

*25 Արդա՛ր Հայր, աշխարհը քեզ չճանաչեց, բայց ես քեզ ճանաչեցի, և նրանք իմացան, որ դո՛ւ ինձ ուղարկեցիր: 26 Եվ ես **քո անունը նրանց ճանաչել տվեցի** ու պիտի ճանաչել տամ, որպեսզի այն սերը, որով ինձ սիրեցիր, նրանց մեջ լինի, և ես՝ նրանց մեջ:*

1. *Սա աղոթք է, որը սկսվում է հարաբերություններով և ավարտվում հարաբերություններով:*
2. *Աղոթեք պատճառաբանությամբ. Ինչու և Ինչ:*
3. *Ձեր խնդրանքները հայտնի դարձրեք Աստծուն:*

ԻՆՉ Է ԱՍՈՒՄ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ՔԵԶ ԱՅՍ ՊԱՏԳԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ